ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Համագործակցությունը որպես ուսումնական ինքնուրույնության ուղի: Համագործակցային ուսուցման մեթոդները:

Կատարող՝ Նաիրա Գրիգորյան

Առարկա՝ Անգլերեն լեզու

Ուսումնական հաստատություն՝ Հրազդանի Անանիա Շիրակացու անվան N 6 հիմն. դպրոց

ՀՐԱԶԴԱՆ 2023

ԹԵՄԱ Համագործակցությունը որպես ուսումնական ինքնուրույնության ուղի: Համագործակցային ուսուցման մեթոդները:

ԱՌԱՐԿԱ	Անգլերեն
ՀԵՂԻՆԱԿ	Նաիրա Գրիգորյան
ՄԱՐԶ	Կոտայք

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Անանիա Շիրակացու անվան N 6 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն……3

Համագործակցությունը որպես ուսումնական ինքնուրույնության ուղի……3

Համագործակցային ուսուցման կազմակերպումը……9

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ……9

Համագործակցային ուսուցման մեթոդները……10

Համագործակցային ուսուցման օրինակ. Համագործակցային Jigsaw-խճանկար ուսուցման մեթոդի կիրառումը անգլերենի դասերին……11

Հավելված……14

Եզրակացություն……17

Օգտագործված գրականության ցանկ……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ջեյմս ՈԻաթսոնն ասել է, որ ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է : Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերել է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում:

Մանկավարժական նշանակությունից բացի այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում , ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման : Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է:

Համագործակցային ուսուցման ներդրումը նպաստում է կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն:

Համագործակցությունը որպես ուսումնական ինքնուրույնության ուղի

Մանկական ինքնուրույնության, նախաձեռնողականության, պատասխանատվության և առաջին հերթին՝ սովորել կարողանալու դաստիարակումն այսօր ընկալվում է որպե 21-րդ դարի կրթության առաջնային արժեք ու նպատակ: Ակներև է, որ անհնար է նախաձեռնողականություն զարգացնել ուսուցման վերարտադրողական մեթոդների կիրառմամբ: Այդ կերպ հնարավոր է հասնել հակառակ արդյունքի: Ստեղծագործական, իմացական և հաղորդակցական բնույթի նախաձեռնողականությունը ներհատուկ է նախադպրոցական տարիքի երեխաներին: Դպրոցում

աջակցություն չստանալու դեպքում կարող է այն մարել, իսկ համադասարանցիների հետ համատեղ աշխատանքով ուսուցչին կհաջողվի դասարանը վերածել ուսումնական համագործակցության։

Ի՞նչ է համագործակցությունը։ Դա միասնական ուսումնական աշխատանքի կազմակերպմանն ունակ երեխաների խումբ է։ Այդ աշխատանքը յուրաքանչյուր առանձին մասնակցի ուժերից վեր է։ Նմանատիպ խումբը(դասարան) գործում է ո՛չ ամբողջականության սկզբունքով. խմբի աշխատանքի արդյունավետությունն ավելի մեծ է քան յուրաքանչյուր մասնակցի անհատական նվաճումների հանրագումարը։

Ինչպիսի՞ մանկավարժական խնդիրներ պետք է լուծի ուսումնական համագործակցությունը.

1. Յուրաքանչյուր երեխայի համար ապահովել այն զգայական աջակցությունը, որն անհրաժեշտ է ցանկացած մարդու և հատկապես առաջին դասարանցիներին (երբ հարկ է լինում փորձել ինչ-որ նոր բան , մինչ այդ իրենց անհայտ իրողության վերաբերյալ մտքեր արտահայտել)։
2. Հասակակիցների հետ համագործակցությունն այն շարժառիթային աղբյուրն է, որն անհրաժեշտ է առաջին դասարանցիներին, որպեսզի նրանք ներգրավվեն ուսումնական գործընթացի մեջ և դրանից դուրս չմղվեն (հայտնի է, որ ծայրահեղ դեպքում երեխաների 1/3-ի համար շփումն ու մարդկային հարաբերությունները 6 տարեկանում դառնում են այն առաջնային–անձնային արժեքները, որոնց բացակայությամբ նրանց համար ցանկացած գործ դառնում է ճնշող, անհրապույր՝ այդ թվում նաև ուսումնառությունը)։
3. Համագործակցությունն ուսումնառության հզոր միջոց է։ Ապացուցված է, որ համագործակցությունը և հասակակիցների հետ շփումները(և ոչ թե մեծահասակի ղեկավարությամբ գործողությունները) գործունեության այն ոլորտն են, ուր առավել հաջողությամբ են կազմակերպվում կիսածանոթ գործողությունները ։ Այդ պարագայում ընկալելի են դառնում կիսահասկանալի մտքերը։
4. Հասարակական հմտությունները, սոցիալ-հոգեբանական իրազեկությունը և հաղորդակցությունն անխուսափելիորեն կարևոր են այնպիսի ուսուցման բովանդակության առումով ինչպիսիք են՝ ընթերցանությունը, գրավոր խոսքը, հաշվելու և այլ կարողություններն ու հմտությունները։ Սրանք տարրական ուսուցման բովանդակության ավանդական բաղկացուցիչներն են ։ Հասակակից-ների հետ համագործակցության կազմակերպման ընթացքում հասարակական հմտություններն առարկայապես ներկա են յուրաքանչյուր դասի։ Դրանք չեն ենթադրում հատուկ ուսումնական առարկաներ և առանձին դասեր։

5. Խմբում հավասար ուժերի համագործակցությունն անդրադարձի և ապակենտրոնացման աղբյուրի են վերածվում ինչպես իմացական, այնպես էլ զգայական և առանձին ոլորտներում:

Ուսումնական համագործակցության կազմակերպման նպատակով ուսուցիչը պարտավոր է կարգավորել մանկավարժական 3 խնդիր.

Առաջին ՝ դասի բովանդակությունը կառուցել այնպես, որ երեխաները նկատեն գործողության հայտնի միջոցի և նոր իրադրության միջև գոյություն ունեցող հակասությունը:

Երկրորդ ՝ նախաձեռնել մանկական կռահումները և աջակցել դրանց այնպես, որպեսզի նրանք կարողանան գործել նոր իրավիճակում: Էական չէ՝ ճի՞շտ են այդ կռահումները թե ոչ:

Երրորդ ՝ հարկավոր է յուրաքանչյուր երեխայի հնարավորություն ընձեռել՝ զգացմունքայնորեն ներգրավվելու ընդհանուր որոնումների մեջ:Պետք է ոչ միայն նկատել, այլև վերապրել իմացական դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները:

Տարրական դասարանն է ուսումնական համագործակցության ծննդավայրը: Եթե ուսուցիչն այդ խնդիրը հետաձգում է, թեկուզ մեկ տարով, ապա բարդությունները կրկնապատկվում են: Նա ստիպված է լինում ոչ միայն երեխաներին վարժեցնել համագործակցությանը, այլև կրկին սովորեցնել հաղթահարել ֆրոնտալ ուսուցման կաղապարները: Առավել դժվարությամբ են հաղթահարվում աշակերտների ուսումնական հետևյալ սովորույթները.

Յուրաքանչյուրն ուսումնական աշխատանքը պետք է կատարի անհատապես: Համադասարանցուն կամավոր օգնությունը (ուսուցչի կողմից չերաշխավորված) համարվում է հուշում կամ արտագրության հնարավորության ընձեռում: Դրա համար մեզ մեղավոր են ճանաչում:

- Համադասարանցիների մտքերը կարող են լինել և՛ հանճարեղ, և՛ հիմար: Առանց ուսուցչի թույլտվության չի կարելի դրանք քննարկել կամ կիրառել:
- Ուսուցիչը միշտ իրավացի է, հարկավոր է նրա մտքերը հասկանալ, հիշել և առհարկի օգտագործել: Չի կարելի ուսուցչի հետ չհամաձայնել և սեփական ձևով գործել:
- Հարցեր պետք է ուղղել այն դեպքում, երբ ուսուցիչն ասում է. «Ինչպիսի՞ հարցեր կան»:
- Ուսուցիչը խրախուսում է աշակերտների ճիշտ պատասխանները և ուղղում սխալները: Ես չպետք է անհանգստանամ մյուս երեխաների սխալների համար : Կարևորն այն է , որ ես ինքնս սխալներ չգործեմ :

Ուսումնական համագործակցության դեպքում երեխայի մեջ ծագում են հակասական դրույթներ.

- Չկան սխալներ, կան միայն վարկածներ, որոնք կամ ամբողջապես, կամ մասամբ հաստատվում են կամ հերքվում։ Վարկածների առաջադրումը պատվաբեր է ։
- Իմ կարծիքը կարևոր է. այն ուշագրավ է և՛ ուսուցչի, և՛ համադասարանցիների համար։ Սակայն պահանջվում է այն հիմնավորել։
- Այն ամբողջ նյութը, որը դասի ժամանակ արտահայտվում է խոսքով, ինձ է հասցեագրված։ Ինձնից ակնկալվում է անհապաղ պատասխան՝ համաձայնություն կամ անհամաձայնություն։
- Հազվադեպ եմ կարողանում ըմբռնել ուսուցչի վերաբերմունքը՝ ճի՞շտ է արդյոք իմ կողմից ձևակերպված միտքը։ Այս առումով ինձ օգնության են գալիս համադասարանցիները։
- Միշտ չէ, որ ճիշտ է այն ինչ առաջարկում է ուսուցիչը։ Երբեմն նա ինձ հրավիրում է վիճաբանելու, երբեմն էլ ուսուցիչը , ինչպես յուրաքանչյուրը , կարող է սխալվել։ Հարկավոր է նրան օգնել։
- Համադասարանցիներին և ուսուցչին օգնելն ու նրանցից օգնություն ակնկալելը բնական երևույթ է։

Դասարանում ուսումնական համագործակցության կազմակերպմանը նպատակաուղղված ուսուցչի ջանքերը հարյուրպատիկ փոխհատուցվում են, երբ ի հայտ են գալիս առաջին տեսանելի արդյունքները։ Դրանք մանկական ուսումնական և իմացական նախաձեռնության ազատագրումն ու զարգացումն են։ Մանկական նախաձեռնողականությունը և որոնողական ակտիվությունը միտված են խնդիրների լուծման տարբերակների և միջոցների ինքնուրույն բացահայտմանը։ Ուսուցչի նպատակն է՝ խնամքով աջակցել սովորողներին և զարգացնել նրանց որոնողական գործունեությունը։ Անհրաժեշտ է ձևավորել ինքնուրույն սովորելու կարողություն՝ առանց ուսուցչի մշտական օգնության և հրահրման։ Սակայն մանկական ազատության, անկախության, նախաձեռնողականության դաստիարակման հանդեպ ուսուցչի նպատակադրումները միշտ չէ, որ համընկնում են նախաձեռնողական գործողություններին։

Երեխաներին գիտելիքների ոչ արդյունավետ հաղորդումը, որոնողական գործունեության չմղող գործողությունների և մտորումների պատրաստի օրինակները ուսուցչի հիմնական դժվարություններից են։ Ուսուցման ավանդական մեթոդները չեն ընձեռում դրանց հաղթահարման հնարավորություններ։ Երեխաները կարող են ինքնուրույնաբար ստեղծել կանոններ, օրինակներ, ալգորիթմներ, հրահանգներ, բնութագրումներ, եթե նրանց ուսուցիչն առաջնորդվի երկու կարևոր սկզբունքով.

1. Երեխաների փոխարեն չկատարել ոչինչ

2. Խրախուսել խնդիրների լուծման սեփական տարբերակների մանկական որոնումներն ու փորձերը:

Մանկավարժական ոճերի բազմազանությամբ հանդերձ դասարանի ուսումնական համագործակցության կազմակերպմանը ներհատուկ է մեկ ընդհանուր բնութագիր. վարպետ ուսուցիչը կարողանում է երեխաներին պահել խնդրի քննարկման շրջանակներում: Նա միևնույն ժամանակ նրանց տալիս է առավելագույն ազատություն՝ լուծման ամենաանհավանական, չնախատեսված ուղիների, որոնումների առումով: Համատեղ ուսումնական գործունեության կազմակերպիչը դասը մշտպես կառուցում է արտասովոր կերպով: Մի կողմից մանրամասնորեն պլանավորվում է դասի յուրաքանչյուր քայլը, մյուս կողմից ճկունորեն արձագանք է տրվում ցանկացած (կարևոր չէ հարմար է թե ոչ) մանկական մտքի, կռահման, հարցադրման, ենթադրության, որոնք ի հայտ են գալիս լուծման ընթացքում:

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է , որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում:

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում,

վերապատրաստում իրականացնողների կողմից։ Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- Դասարաններում ուսուցումը սովորողների անհատական առանձնահատկություններին հարմարացնելը
- Բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը
- Ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը։

Համագործակցային ուսուցման տարրերն ըստ Ջոնսոնների, հիմնականում հինգն են.

- Դրական փոխկախվածություն
- Դեմ առ դեմ փոխազդեցություն
- Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն
- Միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ
- Խմբային գործընթացի մշակում

Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը։ Պասի Սահլբերգը փոխներգործուն (ինտերակտիվ) փոխներգործուն առաջադրանքը դիտարկում է, որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր։

Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է։ Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից։ Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ։

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում ուսուցչին հասկանալու էությունը ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման ու արժևորման համար։

«Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումը աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին»։

Համագործակցային ուսուցման կազմակերպումը

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողների և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

Համագործակցությունը ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ

«Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարավորություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում»:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչը այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստող միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն նայդ դերը լի է մարտահրավերներով:

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար:

Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

Համագործակցային ուսուցման մեթոդներ:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Ստորև ներկայացնում ենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք:

1. ***Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:*** Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում, իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբերին:

2. ***Խճանկար (Ջիգսո, Jigsaw):*** Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկար դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից մեկը. աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝

դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ «Ջիգսո 2ե», որի փուլերն են.

- Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում
- Աշխատանք փորձագիտական խմբում
- Աշխատանք ուսումնական խմբում
- Ավարտական աշխատանք
- Ամփոփում

3. Շրջագայություն պատկերասրահում: Սա խճանկարե մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերի կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

Ներկայացնենք համագործակցային ուսուցման դասի օրինակ.

Դասի թեման՝ The Pickwick club

Իմ փորձից ելնելով կարող եմ ասել, որ 9-րդ ա դասարանում դասը վարել եմ խճանկար (jigsaw -ջիգսո) համագործակցային մեթոդով և եկել եմ այն եզրակացության, որ արդյունքն այստեղ ավելի բարձր է եղել, քան 9-րդ բ դասարանում, որտեղ այն չեմ օգտագործել:

Այժմ մանրամասն նկարագրեմ անգլերենի ժամին խճանկար համագործակցային ուսուցման մեթոդով անցկացրած դասի իմ փորձը: Դասարանում աշ-ին բաժանել եմ 4 անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տվել եմ դասից մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Կարող եմ ասել, որ այս մեթոդը ձեւավորում է «սովորել սովորելու» կարողությունը_: Ես ստանձնել եմ ուղղորդողի դեր, վերահսկել եմ խմբային աշխատանքը, ոգևորել նրանց, դժվարին պահերին ճիշտ կողմնորոշել, վստահություն ներշնչել կատարվող գործի հանդեպ, սովորեցրել համագործակցության հմտություններ:

Ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացրել են իրենց հատվածը՝ կարդացել և վերարտադրել են տեքստը, բացատրել տեքստի անծանոթ բառերն, դուրս են հանել տրված բառերի հոմանիշներն ու հականիշները, դրանցով կազմել նախադասություններ, կատարել լեզվական աշխատանքներ։ Ես կարող եմ ասել, թե ինչպես է յուրաքանչյուր խումբ սովորել դասի մեկ հատվածը, բայց արդյունքում բոլոր աշակերտները սովորել են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները։ Եվ արդյունքում ես ստացել եմ հետևյալ արդյունքը.

-Աշակերտները համագործակցեցին միմյանց հետ

-Կիսվեցին իրենց ստացած տեղեկատվությամբ

-Համատեղ լուծեցին իրենց առջև դրված խնդիրները

-Ստեղծեցին իրավիճակներ

-Գնահատեցին համադասարանցիների աշխատանքը

-Ստեղծեցին համագործակցության իրական մթնոլորտ։

Այս իմ փորձից ելնելով կարող եմ ասել, որ յուրաքանչյուր աշակերտ ունի գիտելիքների կառուցման իրեն հատուկ ձևերն ու մեթոդները, որոնք պայմանավորված են անհատի առանձնահատկություններով։ Անհրաժեշտ է, որ այդ գործընթացում ուսուցիչն օգնի աշակերտին՝ կառուցելու իր գիտելիքը։ Ես տեսա, որ համագործակցային ուսուցման այս ձևը օգնեց ուսուցանվող նյութի ավելի լավ յուրացմանը, զարգացրեց ուսուցման նկատմամբ դիրքորոշումները և սովորեցրեց աշակերտներին լինել միասնական, նվիրվել ընդհանուր նպատակի իրականացմանը, ինչը նրանց միջև առաջացրեց պատասխանատվության մեծ զգացում, նրանց մեջ ձևավորեց մարդկային մեծ արժեքներ։

9-րդ ա դասարանում աշակերտները այս մեթոդի օգնությամբ հասան շատ լավ արդյունքի, ինչը չեմ կարող ասել 9-րդ բ դասարանի մասին, որտեղ չօգտագործվեց այս մեթոդը։

Եզրակացություն

Կրթական համակարգում կատարվող բարեփոխումները նոր մոտեցումներ են թելադրում: Այսօր ուսուցչից պահանջվում է դասը վարել ժողովրդավարական ոճով, որպեսզի աշակերտը պասիվ ընկալորդից դառնա ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից, իսկ ուսուցիչը հրաժարվի սովորեցնողի, վերահսկողի իր դերից և որպես գործընկեր աշակերտների հետ մասնակցի որոնողական աշխատանքներին և նրանց հետ ապրի «հայտնագործման» հրճվանքը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել , որ յուրաքանչյուր աշակերտ ունի գիտելիքների «կառուցման»՝ իրեն հատուկ ձևերն ու մեթոդները, որոնք պայմանավորված են անհատի առանձնահատկություններով: Անհրաժեշտ է, որ այդ գործընթացում ուսուցիչն օգնի աշակերտին ՝ «կառուցելու» իր գիտելիքը:

Համագործակցային ուսուցման ձևը օգնում է ուսուցանվող նյութի ավելի լավ յուրացմանը , զարգացնում է ուսուցման նկատմամբ դիրքորոշումները և սովորեցնում աշակերտներին լինել միասնական, նվիրվել ընդհանուր նպատակի իրականցմանը, ինչը նրանց միջև արթնացնում է պատասխանատվության մեծ զգացում, նրանց մեջ ձևավորում մարդկային բարձր արժեքներ:

Համագործակցային ուսումնառության հաջող ընթացք ապահովելու համար ուսուցիչը պետք է ստանձնի ուղղորդողի դեր: Նա պետք է վերահսկի խմբակային աշխատանքը , ոգևորի նրանց , դժվարին պահերին ճիշտ կողմնորոշի, վստահություն ներշնչի կատարվող գործի հանդեպ , սովորեցնի համագործակցության հմտությունները: Միայն այս դեպքում դասարանում կլինի ակտիվ ուսուցում , քննադատական մտածողություն, ինքնուրույն խոսք կառուցելու կարողություն, գիտակցական ըմբռնում, ուսուցանվող նյութի երկարատև պահպանում:

Այսպիսով՝ համագործակցային ուսումնառությունը արդյունավետ է ոչ միայն գիտելիքների յուրացման , որոշակի կարողությունների ու հմտությունների ձևավորման, քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման տեսանկյունից, այլև այն առումով , որ հոգեբանական դժվարությունների հաղթահարման մի շարք հնարավորություններ է ընձեռում

Օգտագործված գրականության ցանկ

1. Խաչատրյան Ս. Գ, Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006

2.Խաչատրյան Ս.Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/,«Նախաշավիղ » 1.2003, Երևան , էջ 17-24

3.Հովհաննիսյան Ս.,Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. , Համագործակցային ուսուցում, Երևան , 2006

4.Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան 2005

5.Johnson D., Johnson R., 1999, Learning together and alone : cooperative, competitive, and individualistic learning , Boston, Allyn and Bacon.

6.https://en.wikipedia.org/wiki/Cooperative_learning